

ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլ. կէս տարեկանը 6 ռուբլ.
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարադաղաքայիք դիմում են ուղղակի
Тифлису. Редакция «Манак»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Ցայտարարութիւնների համար վճարում են
Խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Երևանից:
Նամակ Արդուինից: Նամակ Խմբագրին: Ներքին
լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Անդրիա: Ֆը-
րանսիա: Նամակ Աւստրալիայի: — ՀԵՌԱՎԻՐՆԵՐ:
— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ:
Շերամական գործը կովկասում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՎԱՆԻՑ

Յուլիսի 23-ին

«Մշակ» լրագրի 124 համարում կարգացի Երե-
ւանից մի նամակ, որի մէջ պ. թղթակիցը խո-
սեցով գինեգործութեան մասին, ուղղում է մի
քանի խօսքեր ինձ և խորհուրդ է տալիս, որ կամ
ես ինքն գրեմ, կամ թէ պատմեմ իմ համոզում-
ները գինեգործութեան մասին ուրիշներին, որ
նրանք կարողանան իմ մտքերը յայտնել լրագրու-
թեան մէջ:

Ես իմ կողմից միայն այս կարող եմ ասել, որ
չո՛ղ գրելով լրագրի մէջ, մեր հին նահապետական
ուղղութեամբ ընթացող գինեգործները ոչինչ օ-
գուտ չեն կարող քաղել ոչ թէ իմ, այլ ինձնից
աւելի հմուտ գինեգործների գրածից, քանի որ
նրանք գործով տեսած չեն եւրոպական ճաշակով
գինի պատրաստելը: Եթէ մենք գրենք մեր համո-
զումները լրագրութեան մէջ, եթէ չստան ամենքը,
գոնէ շատ քչերը ու կը դարձնեն մեր գրածին:
Եւ այդ ուշք դարձնողներն էլ մեծ օգուտ հաս-
ցնում են:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՇԵՐԱՄԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Շերամագործութիւնը պիտի մի ժամանակով
ի հարկէ մղել դէպի գործարանութիւն. նաև տուեց
առաջին առիթը միտադրեալ թելի մանարան-
ների, ֆիլատոնների հիմնովելուն: Նկատեցէք,
որ Կովկասում մասնաձեւ թելի մեծ մասը դուրս է
գալիս ոչ թէ կատարելագործված գործարաննե-
րից, այլ աշխարհներէ, ուր մի քանի չարիքներ են
բանում և այն առաջ և պատմեց նոյն իսկ դրա
համար վարձած բանուորներին Կովկասում թել մա-
նելը դուր մինչև այժմ մեծ մասամբ այսպէս անու-
անված տնային գործարանութիւն է կազմում, թէ-
պէտ և այս վերջինը ոչ սակաւ, բանեցնելով մեծ
քանակութեամբ չարիքներ և ուրեմն բանեցնելով
շատ բանուորներ, հասնում է այսպէս անուանված
մեծ գործարանութեան (Grossindustrie) սահման-
ները: Իւրաքանչիւր այսպիսի չարիք բանում է ա-
ռանձին և չարիքներ և ոտի օրօրելով նոյն բան-
ուորի կողմից, որի ձեռքերը դրադրված են թել մա-
նելով կամ թել քաշելով, որպէս տեղական դար-
ձաւածը ասում է: Բայց կան և չարիքներ, որոնք
այնքան ահապին են, որ մի բանուոր չէ կարող
երկու պաշտօնին էլ վերահասու լինել. այստեղ
չարժողը և մանողը երկու անձեր են: Այս վեր-
ջին չարիքները ծառայում են կողմից թել մանե-
լուն: Նոքա առաջ շատ գործածական էին. այժմ
նոցա բանեցնում են այն բոժոժներից թել մանե-
լու, որոնք անպէտք են համարված աւելի կանո-
նաւոր թելի համար: Մի թել կողմից է և անկա-
նան, երբ նա մանված է 20, 30, 40 և աւելի
բոժոժներից և ամեն տեղ մի և նոյն հաստութիւ-
նը չունէ: Այժմ կանոնաւոր թելը քաշում են
կարծեմ մօտաւորապէս 12 բոժոժից: Բայց երբ
այսօրվայ օրս խօսվում է անկանոն թելի վրա,
այն առաջին յիշած կողմից թելի վրա չէ խօսքը,
այլ այն բաւական կանոնաւոր թելի վրա, որը
մանվում է այն առաջիններից աւելի մանր և ա-
ւելի արագապտոյտ չարիքների վրա, որոնց ևս կա-
նոնանք Ռաշտի չարիքներ, որովհետև, որքան ինձ

բաժնէ լինի իրանց, որովհետև առանց գործ-
նական փորձերի, տեսական ուսումը նշանակու-
թիւն չունի: Եթէ որ մէկը աշխատի միայն գա-
նազան գրքերով կամ թէ գրածներով գինեգոր-
ծութիւնով պարագել, շատ դժուարութիւններով
կարող է առաջ տանել իր ձեռնարկած գործը և
կատարելագործութեան ամենին չի հասցնի իր
արհեստը, որովհետև կը հանդիպի այնպիսի դժ-
ուարութիւններ, որոնց յաղթելու միջոցներից նա
բոլորովին գուրդ կը գտնվի: Արեւմտեան Եւրո-
պայում սորանից 25 տարի առաջ խաղողը փչա-
նում էր մէկ տարափելի հիւանդութիւնից, որ
մենք, երևանցիք, անուանում ենք «Ս» (լատի-
ներէն «Oidium Tuckerei»): Այդ հիւանդութեան
առաջին առնելու հնարը գտաւ երեւելի ֆրանսիա-
ցի քիմիկոս Պաստիւրը (Pasteur): Այս երեւելի
գիտնական մարդը իր երկար աշխատանքներից
և փորձառութիւններից յետոյ հասաւ իր նպա-
տակին և խորհուրդ տուեց այգետէրերին, որ բո-
լոր խաղողները օրթերը տարեկան երեք կամ թէ
չորս անգամ (նպելով ինչպիսի դրութեան մէջ է
հիւանդութիւնը) փոքրսով փչեն ծծումբի փոշիով:
Այսպիսի ձևով և քիչ գումար ծախս անելով
շատ հեշտութեամբ կարողացան արեւմտեան Եւ-
րոպայի այգետէրերը ազատվել այդ հիւանդու-
թիւնից: Եթէ հիմա նորանց այգիների մէջ դուք
մանգաք, այսպիսի հիւանդութիւնով վարակված
որթի հաղիւ կարող էք պատահել: Այս հիւան-
դութեանը, որքան որ ես յիշում եմ, սրանից 8
տարի առաջ ենթարկված էին ինչպէս մեր, նոյն-
պէս ամբողջ Կովկասի այգիները: Ինչպիսի դրու-
թեան մէջ եւ թողել գնացել էի, նոյնպիսի դրու-

յայտնի է, Կովկասում նրանք մոցրած են Պարս-
կաստանի Ռաշտ քաղաքից: Կատարեալ կանոնա-
ւոր թել մանելու համար հարկաւոր էր, որ մեզ
մօտ մուտք գործէին մանարաններ եւրոպական
կատարելութեամբ:

Կովկասում այդպիսի կատարելագործեալ մանա-
րանների հիմնելու ինքնաշարժը պատկանում է
մի ուսու ընկերութեան, որին օտար չէր նաև կա-
ռավարութիւնը ինքը: Այդ մանարանը հիմնվեց
Նուխի քաղաքում 40 թուականներին և բանից
մինչ 50 թականների սկիզբը: Մեծ ներդրու-
թիւն տեղային գործարանական զարգացման վրա
նա չունեցաւ, ինչպէս երևում է. դուրսէ այն պատ-
ճառով, որ ընկերութիւնը տեղացի բնակիչների
վրա այն տպաւորութիւնը աքած լինի, իր մի
այգիների գործ անձնական կարողութիւնից վեր
բան է: Իսկ Կովկասեան դրամատէրը, լինի նա
հայ թէ թուրք, ամենից առաջ խոյս է տալիս
ընկերութիւններից: Ի հարկէ, կարծաւորութիւնը մի
ժամանակ կը ստիպէ նրանց հաշտվել անձնական ցի-
բոցան ոյժերը կենտրոնացնելու կարեւորութեան
հետ: օտար կապիտալների դէմ մարտնչելու հա-
մար, որոնք արդէն այժմ միանում են մեզ
Կովկասի ամենաարդիւնաւէտ տեղերը ձեռք բերել:

Յիստեւ թականների վերջերում հիմնվեց նոյն
Նուխի քաղաքում պ. Ալեքսէյի մեծ գործարա-
նը: Այդ գործարանը այժմ դեռ կայ, բայց արդէն
վաղուց է որ անգործութեան մէջն է: Այլընտ-
րաւոր է մի քանի տարի, յետոյ դադարեց մինչ
70 թականների սկիզբը, ծախվեց 1872 թէ
1873-ին թիֆլիսից յայտնի հարուստ պ. Միլո-
նովին, որը նրան բանեցրեց ինքը մի երկու տարի
և յետոյ տուեց կրկին մի քանի տարով կապալով,
ասում են, մի որ և իցէ 6000 ռուբլիով տարին,
չը նայած որ մանարանը ունէր մինչ 300 չար-
իքներ, որոնցից 190 գործարանի միջին:

Պ. Ալեքսէյի օրինակը, որպէս երևում է, տե-
ղացիների վրա ազդեց, որովհետև նրա մանարա-
նը հիմնելուց կարճ ժամանակից յետ մենք տես-
նում ենք արդէն Ներքին-Աղուլիսում մի նոյնա-
նման մանարան հիմնած 1861 թին պ. Նուստու-
սեանցից. կարճ միջոցից յետ հիմնվում է Օրդու-
բաթում պ. Բաբայի մանարանը. բացվեցան և
այժմ ևս բանում են Ղարաբաղում, ինչպէս ինձ

թեան մէջ տեսնում եմ այժմ: Այս հիւանդու-
թեան մասին քանի անգամ գրեցին հայոց և ու-
սաց լրագիրների մէջ, խօսեցին նորա առաջին առ-
նելու կանոնների և ձեռքի վերաբերմամբ, բայց
ոչ ոք ուշ չը դարձրեց: Պատճառն ինչ է: Իմ
կարծիքով այն, որ մեր խեղճ ժողովուրդը չէ տե-
սած և չունի իր աչքի առաջը օրինակներ, որ
այգիները ազատված լինէին վերեւ յիշած հի-
ւանդութիւնից: Եթէ որ նա տեսնի մի քանի օր-
նակներ, այն ժամանակ միայն կը վստահանայ
վերջին կօպէկները ծախս անել իր այգիները այդ
հիւանդութիւնից ազատելու համար, որը մեծ վը-
նասներ է պատճառ է լինում ամեն մի այգետէրի:
Երևան դուրս պէս եւս բերել տուեցի Թիֆլիսից
ծծումբի փոշի և վերսեր, որ կարողանամ այս
տարվաւից այդ հիւանդութեան առաջն առնել,
և մտադիր էի նպատակիս հասած ժամանակը կան-
չել մէկ քանի այգետէրերին, ցոյց տալ ինչպէս
հարկաւոր է վարվել այդ հիւանդութեան հետ, որ
նրանք էլ կարողանային իրանց այգիներում գործ
դնել նոյն եղանակը: Բայց բարեբաղդաբար այս
տարի մեր Երևանի այգիները չեն ենթարկված
այդ հիւանդութեանը (ինչպէս եւս նկատում եմ
մեր այգիներում և հարց ու փորձ արի ուրիշ
այգետէրից) այնպէս որ ես կը թողնեմ այդ գոր-
ծը միւս տարվայ համար: Ես իմ ձեռքից եկածը
կանեմ և դադարել չեմ պահի ժողովուրդից, այլ
կաշխատեմ նրանց սովորեցնելու և ուղղել նրանց
սխալները այնքան, որքան կարողացել եմ հասկա-
նալ և ըմբռնել Եւրոպայում գինեգործութեան էու-
թիւնը: Կան շատ մարդիկ մեր քաղաքի բնակիչ-
ներից, որոնք զարմանում են թէ ինչու չեն րա-

յայտնում են, 11 մանարաններ, որոնցից երեքը
Շուշի քաղաքում պ. պ. Անանիանցին, Ներսե-
սեանցին, Զօրաբեանցին, իսկ միւսերը պ. պ.
Սարգսեանի, Ահարոնեանցին և այլն, Շուշուց
դուրս: Վերջապէս կայ այժմ Նուստու մի այգե-
տէրի գործարան պ. Գանձուցովին պատկանող:
Աւելցնեմ, որ սրանցից միայն Բաբայի և Նուս-
տուսեանցի մանարանները ունեն լիւր կամ ու-
սուկ, այսինքն ոլորած թել պատրաստելու բա-
ժանմունքներ:

Սրանք առաւելապէս, շատ մեծ գործարաններ
չեն, բացի պ. Միլոնովից, որը հաշուից դուրս
պիտի համարել, որովհետ նա չէ բանում, միւսե-
րը պարունակում են իւրաքանչիւրը առհասարակ
ոչ աւելի քան 30—50—60 չարիք, սակաւ աւելի:
Աւելան ցանկալի կը լինէր, որ այդ գործարան-
ներում բանող չարիքի թիւը աւելի ճիշդ իմաց-
վէր, քան այդ մեզ գիտեալ կարելի էր. այդ
այն կէտերից է, որ վերաբերեալ ուրիշների ա-
սածին մեծ դուռութեանը պիտի հաւատալ. այս-
տեղ հարկաւոր է անձամբ, սեպհական աչքով
տեսնել: Կան նաև թել քաշողներ, որոնք բանեց-
նում են 25 և աւելի Ռաշտի չարիքներ, մանարան-
ների ուրեմն, որոնք գրեթէ առաջինների աստի-
ճանին են հասնում: Այդ կարգի թել քաշողներ
մանաւանդ բազմաթիւ են Նուխու շառավղում,
որտեղ նաև ամենաշատ թել է մանվում: Ղարա-
բաղում, իմ հաւաքած տեղեկութիւններին համե-
մատ, Ռաշտի չարիքներով թել քաշողները բնակին
չը կան, թէպէտ, խոստովանում եմ, ինձ գտնաւոր
է թւում դրան լիապէս հաւատալ: Ինչ կը վերա-
բերի Օրդուբաթի շառավղին, այնտեղ կարելի է
չարիքների թիւը հաշուել այսպէս. Օրդուբաթ քա-
ղաքում 15-ից մինչ 25 և կամ միջին թւով 20 չար-
իքով մանարաններ կը լինեն 10 հատ, հինգ չարիք-
նի կրկին 10, Յիւս գիւղում չարիքներ առհասարակ
—50, Վերին Աղուլիսում—15, միասին 315, իսկ
պ. պ. Նուստուսեանցի և Բաբայի մանարանների
հետ ընդամենը գուցէ 390 չարիք:

Բայց արդե՞ք որքան թել է դուրս բերվում
այդ բոլոր շառավղիներում: Ամենից դիւրին կա-
րելի է պատասխանել այդ հարցին Օրդուբաթի
շառավղի համար և այդ այն հասարակ պատճա-
ռով, որ այդ տեղում արդիւնաբերած բոժոժը ամ-

կաւում իմ գործը. թող այդ պարոնները չը դար-
մանան, քանի որ ես յանձն եմ առել մի այնպիսի
գործ և մի այնպիսի քաղաքում, որի համար չը
կան յարմարութիւններ: Այս յարմարութիւնները
ձեռք բերելու համար հարկաւոր է բաւականին
ժամանակ. ամենայն մէկ չնչին բանի համար ես
ստիպված եմ դիմել ուրիշ քաղաքներ: Եթէ այս
յարմարութիւնները ձեռք կը բերեմ, այն ժամա-
նակ ես ինձ պարտք եմ համարում տարածել ա-
ռանց ծածկելու ժողովուրդի մէջ իմ դիտցանե-
րը: Բայց քանի որ այս յարմարութիւնները ձեռք
չեմ բերած և չունեմ ինձ մօտ իմ ձեռքովս պատ-
րաստած գինի, ես փոխանակ լրագրութեան
մէջ նկարագրելու գինեգործութեան եղանակները,
կաշխատեմ փորձնականապէս ցոյց տալ ցանկա-
ցողներին մեր տեղական գինեգործութեան այս
ու այն պակասութիւնները: Ես վերեւ ցոյց տվեցի
թէ ինչպէս են ուշք դարձնում խաղողի «Ս»
ասված հիւանդութեան մասին գրածներին, նոյն-
պէս էլ ուշ չեն դարձնի մեր գրածներին և մեր աշխա-
տանքը դուր կը գործի: Խաղողը «Ս» հիւանդութիւ-
նը սարսափելի կերպով տարածված է Կախէթի այ-
գիները մէջ. դրա համար Թիֆլիսի դիւրապատեհա-
կան ընկերութիւնը բերել է տուել Մարտիկայից ծը-
ծումբի փոշի և վերսեր, ձրիապէս բաժանելու
տեղական այգետէրերին: Ես առիթ ունենալով
խօսել մեր այգիների մասին, խորհուրդ կը տալի
Երևանի այգետէրերին ինչպիսի ներկայացնել
նոյն ընկերութեանը այդ ծծումբի փոշուց և վերսե-
րից ստանալու համար: Յուսով եմ, որ նորանց
խնդիրը անհետանք չի մնայ, որովհետև ինչ-
պէս հաստատ գիտեմ, այդ փոշուց ձրիապէս ու-

րողչութեամբ մնում է նոյն իսկ տեղային մանա-
րանները, իսկ այդ մի պարագայ է, որը նշանա-
ւոր է հարցը լուծելու համար: Թաց բոժոժը, նախ
քան մանարանում տաք ջրի մէջ եփվի, իր կոր-
չող նիւթից զատվելու համար, չորացանք է և
յետոյ թել քաշելու ծառայում: Այդ փոփոխման
և ձեռնարկութեան ենթարկվելու ժամանակ,
թաց բոժոժը իր նախկին քաշը, ծանրութիւնը
կորցնում է և որքան, ահա այդ կէտն է, որ բազ-
դաւորապէս, յայտնի է: Փորձը ցոյց է տալիս, որ
մի պուղ չոր բոժոժ ստանալու համար հարկաւոր
է պակասը 3 պուղ 10 ֆունտ զերգանց և մօտ
3 1/2 պուղ հասարակ թաց բոժոժ. իսկ մի պուղ թելը
համար հարկաւորութեամբ է 4 1/2 շատ զերգանց,
և 6—8 պուղ հասարակ չոր բոժոժ: Այդ տուածնե-
րից հետեւում է, որ մի պուղ թելը թաց բոժոժի
բանակութեան հետ 1:24 յարաբերութեան մէջն
է: Բաժանեք 16,000 պուղը, որը Օրդուբաթեան
շառավղի թաց բոժոժի արդիւնաբերութեան քա-
նակութիւնն է ներկայացնում, 24-ի վրա, դուք
կրմանք այդ տեղ մանարաններում քաշած թելի
որդանութիւնը, որը հաւասար է 660 պուղի և
կամ մի քիչ աւելի:

Շուշու և Նուխու շառավղիների համար պի-
տի դիմել այլ մեթոդների, որովհետև այդ տե-
ղերում բոժոժի մի մասը արտահանվում է արտա-
սահման և մանաւանդ որ Նուխու շառավղում
բանող չարիքների թիւը մեզ անյայտ է: Եթէ ձիւղ
է, որ Շուշու շառավղի մանարանների թիւը
11է, որոնք միասին հաղիւ թէ աւելի քան 500
չարիք բանեցնեն, Օրդուբաթի շառավղին համե-
մատութեամբ, որը 390 չարիք է բանեցնում, այն
500 չարիքներ կարողանան 660×500:390 այ-
սինքն քիչ աւելի քան 840 պուղ թել: Բայց այդ
համեմատութիւնը թիւութիւն ունէ այն պատճա-
ռով, որ մի կատարելագործված մանարանի չար-
իքը աւելի երկար ամիսներ է բանում, քան Ռաշտի
չարիքը, որ, որպէս վերեւ տեսանք, ինչպիսի է Օր-
դուբաթի շառավղում: Մի մեծ մանարան բանում
է 5, 6, 7, 8 և աւելի ամիս, մինչդեռ մի Ռաշտի
չարիք բանում է 2, 3, 4, շատ շատ 5 ամիս: Ա-
ռաւելութիւնը ուրեմն առնուազը կրկնապա-
տիկ է. Ղարաբաղում մասնաձեւ թելը քանակու-
թիւնը կարելի է ուրեմն ընդունել 1,600 պուղ:

դարձված է բառակազմակերպության օրգանական և կախիկ-թի գրական տեղերը:

Կարապետ Աֆրիկեան

ՆԱՄԱԿ ԱՐԻՈՒՆԵՑ

Յուլիսի 22-ին

Ամսիս առաջին օրերում Արդուինը մեծ յուզման մէջ էր կառավարչական իշխանի գալուստը: Իշխանին զինաւորելու համար յունիսի 19-ին եկած էր նահանգապետը մի քանի ուղեկիցներով, որ և ուղեկիցները Արդուինը 22-ին, Արդուինի գաւառապետի հետ: Նահանգապետի հետ եկել էր նաև նաև Բաթումի պետական ուսումնարանի տեսուչ պ. Բաղդասար: Սա, իմ ընկերակցութեամբ, տեղւոյն հայոց և տաճկաց ուսումնարանները այցելեց: Պէտք է ասած, որ պ. տեսուչը մեծ համակրութեամբ վարկեցաւ զեպի ազգային ուսումնարանները և իր կողմից հարկաւոր օգնութիւնները խոստացաւ սոցա յառաջանալ համար: Հայ-կաթոլիկների օրերը պայմանաւորաբար այցելելով, նա տեսաւ այնտեղ աշակերտութիւնը գործած ժանիակ (dentelle, քրթեթ): Այդ ձեւագործները տեսնելով, 15 րոպէի ընթացքի, որպէս զի աղքատ աշակերտուհեաց համար հարկաւոր թել և գործիքներ գնելու Ուսումնարանի տեսուչ վարկապետը շնորհակալութեամբ ընդունեց և խոստացաւ կատարել նուիրատուից աշակերտութիւնը և այդ ձեւագործներին մի ընծայ ուղարկել իրան:

Յունիսի 26-ին պ. պ. նահանգապետն ու գաւառապետը Բաթումի նահանգի սահմանին վրա ընդունեցին նորին պայծառաբանութեան իշխան Գոնդուլի-կորսակովին, և իր ուղեկից զինեալ լինելով, կամարովին: Նախ, որովայն էր որ իշխանը 26-ին մնաց խեղճովին գիւղը, որ անկիւնապէս մօտ է սահմանին, 27-ին Արդուինը և 28-ին Արդուին: Սակայն, յետոյ նահանգապետի խնդրանք կառավարչապետը փոխեց ընթացքը, մի օր ամբողջ Արդուինում մնալու համար: Ըստ այսմ և կարսի նահանգի սահմանը, Երևանու լեռնանցնելուց յետոյ, ուղղակի հասաւ Ախալցխա գիւղը, որ Արդուինից մօտ 10 վերստ հեռավորութիւն ունի: Իշխանին զինաւորած էին 400-ից ա-

ւելի ընակիչը ձիաւոր, բացի բաղաձայն հետակներէն: Գիւղը կատարեալ դարձրւում և լուսաւորված էր: Այդտեղ, իշխանին պատուելու համար, դաւի ու զուրան էր հնչում:

Երկրորդ օրը, 27-ին յունիսի, իշխանը ուղեկիցներով զեպի Արդուին, երեկոյան 6 ժամին հասնաւ: Այդ ու հացը մատոյց քաղաքի զեպուստապ. Յովհ. Այվազեան: Իրան զինաւորող բաղաձայն իշխանը համառօտ կերպով անց թէ, ինքն նոցա համար է եկել և թէ որ և է ինչպիսի ունեցողներին պատրաստ է ընդունել: Պաշտօնական ներկայացումները ընդունելուց յետոյ, իշխանը մտաւ յատկապէս պատրաստված պ. Անդրէաս ֆիլոյանի և եղբայր տունը, որու նմանը, կարծես, ոչ թէ միայն Արդուինում, այլ նաև շատ անկի թաղամասեր քաղաքներում ևս, օրինակի համար Թիֆլիսում իսկ, հազիւ կը գտնվի:

Ամբողջ քաղաքը մարդկած և ճանապարհները ծաղիկայ կամարներով զարդարված էին: Բաղաձայնի զոյնգոյն լապտերներ, արուեստական հուրեր և հրային փամփուշտ թէ նոյն և թէ հետեւեալ դիւեր, լուսաւորութեան և խորհանքի մէջ պահեցին Արդուինը: 28-ին իշխանը ընդունեց քաղաքային պատգամաւորութիւնը և խնդրագիր ներկայացնողներին: Նախաճաշից յետոյ 12 ժամին ն. պայծառաբանութիւնը այցելեց թրքաց մեկիթը և հայոց եկեղեցիներն ու ուսումնարանները, ընդունելով աշակերտների երգերով: Իշխանը բարեհաճելով այցելել նաև մեր օրիորդաց ուսումնարանին, ընծայեց 25 րոպէի ի քաջալերութիւն աշակերտուհեաց և փոխաբեր ընդունեց նոցա ձեռագործներից սեղանի մի սփռոց: Այդտեղ իշխանը յայտնեց իր գոհունակութիւնը: Ն. պայծառ. 50 րոպէի ընծայեց նաև տեղւոյն աղքատներին: Երեկոյան ճաշին, իշխանի սեղանին հրաւիրվեցան զեր. եպիսկոպոսը, պ. ֆիլոյան և Եւֆրէյթի մի Արդուինի բեկից մի մի ներկայացուցիչ: Սեղանի վրա կառավարչապետը համակրութեամբ ու եռանդով խօսեցան մեր նշանաւոր նկարիչ Յովհաննէս Այվազովսկու մասին, կէս ժամից աւելի, մեծ գովութեամբ յիշելով նրա այլ և այլ պատկերները:

Աւերորդ է ասել թէ զինուորական երաժշտութիւնը միշտ ներկայ էր:

29-ին առաւօտեան իշխան Գոնդուլի-կորսակովին ուղեկիցներով և նահանգապետ զինեալ մայօր Սմէկաովին հետ յատուկ պատրաստված նաւակով, ձորովով գնացին Բաթում գիւղը, Արդուին գաւառի սահմանը, ուսկից անցան Աջարիս:

«Մշակի» 103 թիւով հրատարակված նամակիցս յայտնի է ընթերցողներին, զերմանացի նշանաւոր լինողանքանութեան մագիստր» պ. Պետերսենին այստեղ գտնվելը: Պատու ունենալով ի մօտոյ ծանօթանալ յարգելի բնագետի հետ, ևս առիթ ունեցաւ երբեմն ընկերանալ նաև նրա ուսումնական չրջագայութեանց և հետազոտութեանց: Նա, զինաւորապէս պարապված էր միջատների քննութեամբ, որոնց մասին զարմանալի խորին հմտութիւն ունի: Առաւօտեան 8 ժամից մինչև 11 էր նրա չրջագայութեան ժամանակը: Երբեք չէր իրաւորում իրաւորում էր նաև հագուստները լուսնի, իր բուսականական հաւաքածուի համար: Տեղացի ազգաբնակիչները, ինչպէս զերին է երկարեց, մեծ զարմանքով էր նկատում թէ նա ինչպէս թիթիկեայ ամանը ունի, թիթիկեա բռնելու համար գնում էր զեպի բուսականները, և ահագին աշխատութեամբ միջատներ և բույսեր էր հաւաքում: Քիչ ժամանակի մէջ նրա այդ ձեռնարկութեան լուրը տարածվեցաւ ամբողջ քաղաքի մէջ և մեր հայերը «ճանճ բռնող» տիտղոսով միտեցին նրան: Այնուհետև ոչ զին անծանօթ էր «ճանճ բռնողը». նա ամենքի հետաքրքրութեան առարկան էր դարձել: Իսկ երկրանքը իրանց գործ էին շինել օրը մի քանի տեսակ բռնել, հաւաքել և բերել նորա մօտ: Երեկոյան յայդ աշխատութիւնը առանց վարձատրութեան էր թողնում պ. բնագետը: Երբ Ա. կամարով կառավարչապետ իշխանի հետ Արդուին եկաւ, նրա առաջին խօսակցութիւնը զերմանացի զինաւորականի հետ էր, իր ուսումնական հետազոտութեանց մասին: Տեսնելու արժանի էր թէ ինչ առանձին հաճութեամբ յիշում և կրկնում էր նա «ճանճ բռնող» բառերը, երբ իրան իմաց տրվեցաւ պ. Պետերսենի այդ նոր կողմը: Ուսումնական զինեալը մանրամասնաբար զետեղ նրա հաւաքածուն, որի մէջ, թիթիկեայ microlepidoptera ընտանիքից մի քանի տեսակները հարկ տեսաւ իրան համար վեր առնել, իսկն-

դրելով բնագետից որ նա աշխատի կրկին գտնել այդ տեսակից:

Պ. Պետերսեն «ճանճ բռնող» համար» գնաց Արդուինէլ ալ, ուր նա միայն մի քանի օր կեցաւ: Ընդհանրապէս, այս կողմերը, բնութեան այդ արարածները, այս ամիսներում այնչափ առաւ չեն, որպէս օգոստոսից յետոյ: Այս պատճառով պ. Պետերսեն օգոստոսին է սպասում նոր հետազոտութիւններ սկսելու համար: Այս անգամ նա կուղեկորով զեպի մերձակայ թրքաց սահմանը, որտեղից նա աւելի զոհ կը դառնայ այն ժամանակ:

Պ. Վլէշէմ Պետերսեն նշանաւոր է միայն իր բնագետ, նա լեզուաբան է: Նա 12 լեզուների հմուտ է արդէն, իսկ մեր խօսակցութիւնը գրեթէ միշտ ֆրանսերէն էր լինում: Նա տեղեկութիւններ էր հարցնում ինձ հայերէն և թուրքերէն լեզուների մասին: Նա խնդրեց և ևս ալ յանձնեցի նմա մի փոքրիկ ցուցակ այնպիսի արարական բառերի, որոնք միայն զա մայն թէ հայերէն և թէ թուրքերէն մէջ են գործածվում: Բացի այդ, ևս իմ կարողութեան չափ, քանացի բացատրել նմա, հայ ազգի անցեալ և ներկայից գաւտ, հայերէն լեզուի յարաբերութիւնը արաբերէնի, պարսկերէնի, թիւրքերէնի և եւրոպական լեզուաց հետ, և հարցրեցի մի քանի հայերէնի մէջ գործածված բառեր, որոնք մի և նոյն տարրական կազմութիւնը ունեն սահման կրի տի, լատինականի, յունականի և պարսկականի: Այսպէս, պարզեց ինձ հետ պարապմունքները: Այսպէս, պարզեց ինձ հետ պարապմունքները: Նա խորշում է թիւրքերէնի գրաւոր ուսումից, սարսափելով նոցա ընթերցման և գրութեան անաղին զգուշութիւնից, այլ աշխատում է միայն, որպէս կարելի է գործնականը սովորել: Արդէն կազմված է, իբր հետեանք մեր դասագրքերի մասին, տաճկերէն լեզուի պարզ քերականութիւնը, զերմաներէն լեզուով: Պ. Պետերսենի ուսումնական ճանապարհորդութեան ազգագրական բաժնի զինաւոր մասն է կազմում տեղական լեզուների զննութիւնը ու ուսումնասիրելը: Եւ որովհետև աւելի ընդհանուր է թուրքերէնը, ուստի առ այժմ նրա ուղեգրութիւնը գրաւում է զինաւորաբար այդ լեզուն:

Նուիրու շառաւիղի համար պիտի գործածել կրկին մի այլ մեթոդ արդէն յայտնի պատճառով: Տեղացի վաճառականները պնդում են, որ արտասահման գնացող բոժոփ քանակութիւնը սակաւ տարիներում 30,000 պտուղ անցած է: Այդ չոր բոժոփ է, որը հաւասար է աւելի քան 100,000 պտուղ թացի: Բայց մենք տեսնեք, որ Նուիրու և Երևան շառաւիղներում միասին արդիւնաբերվում է մօտ 290,000 պտուղ թաց բոժոփ. արտասահմանի մասը դուրս բերելով այդ գումարից, կը տեսնեք, որ իր տեղը մնում է 190,000 թաց բոժոփ, որից կը ստացվի թել՝ քաշով 24 անգամ նուազ, այսինքն մօտ 7,100 պտուղ: Գորանից տուէր Ղարաբաղին իր 1,600 պտուղ, կը մնայ Նուիրու շառաւիղի համար 5,500 պտուղ թել: Այս վերջինից գուցէ 1,500 պտուղ մնում է միայն Նամակու գործարանները, որտեղից դուրս են գալիս զանազան զանաւորներ, պատուական ջիլիններ, որոնք տեղային բնակիչների գործածութեան են գնում, բայց որոնց նշոյլը անգամ չէ տեսնվում Մոսկվայի այժմեան հանդիսում:

Ընդունելով մի պտուղ թելի զինը 200 րոպէի, որը շատ ցածր է կանոնաւոր թելի համար (սորա զինն է այժմ 250 մինչև 300 րոպէի) մենք կը գտնեք, որ բոլոր երեք շառաւիղներում մասնած թելի արժողութիւնն է աւելի քան 1,550,000 րոպէի:

Մի ժամանակ և դա մեղին շատ հեռու է, Նուիրին կազմում էր ամբողջ Ռուսաստանի համար թելի աւետարի մեծ և ամենանշանաւոր կենտրոնը: Կովկասեան վաճառականները յիշում են այդ տարիները որպէս տեղային աւետարի մի անմոռանալի դարեկոյն: Յիսուն թուականների սկզբում, ասում էր ինձ նոցանից մինը, նա ներկայ է եղած 21,000 պտուղ թելի աւետարի, բոլոր Մոսկվայի նշանակին համար: Այն ժամանակ ամբողջ թելը ուղարկվում էր Մոսկվա և մասամբ՝ Կ. Պոլիս. Յրանիս բոժոփ էր գնում մեր կողմերից:

Բայց եկան տարիներ և շերամական գործը կովկասում ենթարկվեցաւ ամենաարմատական փոփոխութիւնների: Այդ փոփոխման շրջանը ծա-

նուցվում է հետեւալ գծերով. Եւրոպայում բարձրանում են թելի գները, որպէս նաև Ռուսաստանում. այս վերջին երկուստ յայտնվում է Բուխարի թելը. կովկասեան աւետարականների վաճառականական բարձրը փչանում են, հաւատը զեպի նրանց կորչում է:

Երբ Նուիրու թելը դեռ յարգանքի մէջ էր, Բուխարի թելը դեռ նուազ նշանակութիւն ունէր: Բուխարի թելը ընդհանուր մրցութեան դաշտը գրաւելու համար հարկաւոր էին հրապուրիչ հանգամանքներ, նման թելի գների այն աստիճան բարձրանալուն, որին նրանք հասան 60 թուականների առաջին մասում: Ցանկարծ լսվում է որ այդ գները բարձրացած են մինչ 450 րոպէի պտուղ, Եւրոպայի բերքը պակասութեան պատճառով: Բուխարի թելը սկսում է մեծ քանակութիւններով ուղարկվել Ռուսաստան և սպառնալ Նուիրու թելին. կուրից Բուխարստանը յաղթող դուրս եկաւ. կովկասը պիտի զիջէր: Այսպիսի փոփոխ մրցողների երեկոյն հետ միասին մեր կովկասեան վաճառականների աւետարական բարձրի մէջ ծնում է ու արմատներ ձգում խաբութեան մի հանձնարող եղանակ: Գները բարձրութիւնով զրգոված կիրքը զեպի արագ հարստանալը հասցնում է Նուիրու թել ծախողներին մի անլսած անամօթութեան հարստանալով զլուրհաւատ գործարանատէրերին, Մոսկվայում, ամենայնպէս միջոցներով, որպէս են եղած՝ լեցնել բոժոփները աւաղով, թելը՝ ամեն տեսակ զիւրկով, ինչ միայն կարող էր սպարանքը քաշը աւելցնել—բար, երկաթի կտորներ և էլ ինչ գիտեմ ինչ փոփոխութիւն: Գործը հասաւ մոլորական, աւետարականութեան հասցնում համարված փոխադարձ հաւատը արագ վայր է ընկնում, այնպէս որ կովկասում այդ երեկոյն տեղիք է տալիս այն հանդուգների կազմակերպ, իբր տեղային շերամական գործի անկումը բացառապէս տեղային վաճառականների կեղծութեան պիտի փոխարինել:

Այդ ժամանակներին սկսվում է նաև բոժոփ արդիւնահանութիւնը զեպի Յրանիս, բացի բոժոփից, նոյնտեղ ուղարկվում է կովկասից նաև լատ կամ ֆրիզոն, բառինետ և ֆրիզոնէս կոչված տակուհները, որոնք ստացվում են թել քաշելու ժամանակ և որոնց այժմեան գներն են լատին

70 րոպէի, միւս երկուսի 14 ր. և 10—12 ր.: Լատից չինվում է թաւիչ, բախնետից—բուրդըս կոչված կեղծ մետաքսայ կտորը:

Վերջացնելով մեր յօդուածը, խօսեմք մի քանի խօսք նաև շերամական գործում զանազան դասերին պատկանող մասնակցողների մասին:

Շերամագործ, առհասարակ, աղքատիկ դասին է. նրան պակաս են թիթիկները և տները, որոնք հարկաւոր են գործին: Անա ինչու կարելի է ենթադրել, որ նրանց թիւը կովկասում բաւականի նշանաւոր պիտի լինի: Այդ արդէն մեծ բան է, եթէ մի շերամագործ մի ամառվայ մէջ կարողանար 30 պտուղ բոժոփ ստանալ, որոնք 15 րոպէիով պտուղ, 450 րոպէի գումար կը կազմէին: Բայց առհասարակ, շերամագործ ստանում է 15, 10, 8, 5, յաճախ միայն մի պտուղ և աւելի պակաս: 8 պտուղ կարելի է միջին թիւ ընդունել: Այդ հիման վրա կարելի է ասել, որ Օրդուբաթի շառաւիղում շերամագործների թիւը գուցէ հասնէ 2000, Երևանի մէջ՝ 10,000, Նուիրու մէջ՝ 20,000: Եթէ բերքը լաւ է, օգուտը պիտի որ մեծ լինի, որովհետև բոժոփի գին հետ համեմատած ծախսը աննշան է: Չը նայած դրան, հազիւ թէ գտնվում շառերը, եթէ այդպիսիները առհասարակ կան, որոնք հարստացած լինէին շնորհիւ շերամագործութեան:

Մանկու գործարանների բանաւորները, որպէս շերամագործներ են, մեծ մասամբ թուրք տարրին են պատկանում: Բայց հաս մի հետաքրքիր փաստ. Նուիրու և Օրդուբաթի գործարաններում բանաւորները տղամարդիկ են, Երևանում՝ կանայք թէ աղջկանք: Բանաւորների վարձը տեղով բաւականի բարձր են: Օրդուբաթի շառաւիղում նա 8-ից մինչ 20 րոպէի է, Երևանում 7—12, Նուիրում՝ 15—25: Բայց այս թիւերը դեռ կարօտ են հաստատութեան: Աշխատանքի տեղողութիւնը մօտ 12 ժամ է:

Ինչ կը վերաբերի գործարանատէրերի դրութեան, այստեղ պիտի զանազանի կանոնաւոր տեսած թել քաշողներին անհաւանութիւնը քաշողներից: Երեք շառաւիղներում ստացած թելը մեծամասնութիւնը պատկանում է Ռաշտի չարեկներից ստացած, որեմն ասելը անհաւանութիւն, և ուրովհետև այդ երկու տեսակ թելերի գներն մէջ

եղած զանազանութիւնը այնքան մեծ է որքան նրանց արտադրութեան ծախսերը, բնական է, որ կանոնաւոր թել քաշողներից յարատւ գնադատներ են լսվում անկանոն թել մատուցողների վրա: Եթէ առաջին զինը 300 րոպէի է, երկրորդինը՝ 250, զանազանութիւնը ուրեմն 50 րոպէի, ծախսերի զանազանութիւնը, այսպէս պնդում են գործնական գործարանատէրերը, ոչ 50 այլ 80 և 100 րոպէի է: Բայց այդ ինչ է նշանակում. նշանակում է, որ նրանք զանազանութիւն են Մոսկվայի գործարանատէրերի վրա, որ սրանք կանոնաւոր թելը ըստ արժանւոյն չեն գնահատում: Գնադատ փոխերից մէկը ինձ ուղում էր համոզել, թէ իրենց փխակը կը լաւանայ, եթէ իւրաքանչիւր թել քաշող ստիպված լինի դեռ սարքելու մի կօմիտեի իր պարանքը ցոյց տալու, որը, այդ կօմիտեի, իր կնիքը կը դնէ թելի վրա, թէ սա այս կամ այն աստիճանի կանոնաւորութեան թել է. այդպիսով, նրա կարծիքով, արդեւ կը զնվէր, որ անկանոնաւորները չը կարողանան իրենց թելը կանոնաւորի տեղ անցկացնել: Բայց այդ յարգելի գործարանատէրը մի բան միանգամայն մոռանում էր. այն՝ որ մեղաւորը ոչ թէ անկանոն թել քաշողներն են և ոչ էլ Մոսկվայի գործարանատէրերը, այլ մի այլ բան է, որը մեր աչքից փակված է, բայց այդ պատճառով միայն ոչ պակաս ուժեղ է. այդ հասարակութեան ընդհանուր բարօրութեան աստիճանն է, որը արտապայովում է հասարակութեան ճաշակի մէջ, իսկ Ռուսաստանում այդ ճաշակը այնպէս է, որ նա միտաբանայ երկու գործուածների մէջ, որոնցից մինը ստացվում է կանոնաւոր թելից, միւսը՝ անկանոն կանոնից, այն մեծ գնադատներին չէ գնում, ինչ որ կը լինէր եթէ Մոսկվայի գործարանատէրերը մի պտուղ կանոնաւոր թելին, իրենց պահանջածին համեմատ, 80 կամ 100 րոպէի աւելի բարձր գին տալին. քան անկանոնին: Իսկ դրանից բղկում է այն շատ գործնական հետեանքը, որ, եթէ նրանք զանազաններ արդարացի են, կամ պիտի նրանք կանոնաւոր թել մանկ չը շառաւիղներ և կամ աշխատեն այդպիսին աւելի քիչ ծախքով արտադրեն:

Մոսկվա.

Ա. Արաքսեանեանց

Իսկ հայերէն լեզուի մէջ, գիտնական գերմանացու սովորած առաջին խօսքն էր իր նոր կուշումը կազմող վերե յիշված երկու բառերը:

Պ. Պետրոսեան ուրախութեամբ ներկայ գտնվեցաւ նաև լուսաւորչական հայոց ուսումնարանի հարցաքննութիւններին:

Իսկ հիմա, երբ ժամանակաւորապէս դադարեցոյցած է իր չընդգայութիւնը, նա զբաղված է իր ճանապարհորդութեան օրագիրը պատրաստելով:

Առաքել Սարգիսեան

ՆԱԽԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Ղուբա, յուլիսի 19-ին

Բարեհաճեցէք տեղ չնորհել ձեր պատուական լրագրում մեր այս նամակին, որը պարունակում է իր մէջ մեր սիրողներին, ներքեւում ստորագրողներին, ամսոյս 11-ին տված ներկայացման հաշիւը:

Բարեգործական նպատակով խաղաղինք քաղաքային այգում «Վարդանանց պատերազմ» ողբերգութիւնը, որի համար ծախած տոմսակները գուտ փողը հասել էր 187 ր. 50 կօպէկ. գումարի: Այս գումարից ետեւ են զանազան ծախսեր: 167 ր. 50 կօպէկ, որի մէջ և համարվում է 50 ր. նուէր Բագրի թէպական ուսումնարանի աշակերտների բարեգործական ընկերութեանը որպէս վարձ նորա մեզ ուղարկած զանազան հանդերձներին մեր խաղաղած ողբերգութեան համար:

Իսկ մնացորդ 20 ր. դերասաններին խորհրդով և ժողովով ցանկութեան համաձայն նուիրեցինք Ղուբայի հայոց հոգեւոր դպրոցի աղքատ աշակերտներին:

Ն. Ավարանց, Գ. Սարգիսեան, Ա. Բէրամեան, Վ. Մարտիրոսեան:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Շնորհակալութեամբ ստացանք «Սրինգ Հովան» մանկական երգերի, ոտանաւորների և առակների փոքրիկ ժողովածու: Այդ զբոսովի հեղինակը Ղազարոս Աղայանն է: Պէտք է խոստովանվել որ այդ մանկական ժողովածուի մէջ շատ սիրուն կտորներ կան և առհասարակ ժողովածուն շատ յարմար է մանկանց ընթերցանութեան համար: Կրթչիք տպված է թիֆլիսում Մովս. Վարդանանցի տպարանում, ներկայ 1882 թին: Գինն է 20 կօպէկ և վաճառվում է Վ. Շահվերդեանի լրագրական գործակալութեան խառնութեամբ, որ և հրատարակեց Աղայանցի զբոսովը:

Տրապիզոնի Համադպրոցի դպրոցի տեսուչ պ. Յակոբ Մեղաւորեան երկու օր առաջ հասաւ թիֆլիս: Փոքր առ փոքր ուսուցիչները սկսում են հաւաքվել Ուսուցչական ժողովին ներկայ գտնվելու համար:

Կուբանեան չըմանի ԼԱԲԻՆՍԿԱՅԱՍ ստանիցայից մեզ գրում են որ յունիս ամսին այգտեղ սարսափելի կարկուտ եկաւ, որ մեծ վնասներ տուեց ցանքերին: Կրանից յետոյ չըբերը սկսվեցան և շարունակվեցան ամբողջ յուլիս ամիսը: Մի և նոյն ժամանակ անդադար փչում էր չոր քամին: Գարնանացան հացը կարելի է կատարելուպէս ոչնչացրած համարել: Թղթակիցը աւելացնում է որ չըբը այն աստիճան սաստիկ է, որ տեղ տեղ ծառերի տերեւները բոլորովին դեղնել, չորացել են: Ամեն բան թանգացել է. ամեն տարի խիարի 100 հատը լարինակցում ծախվում էր 10 կօպէկով, իսկ այս տարի 50 կօպէկով է ծախվում, ձմերուկի կամ սեխի 100 հատը ծախվում էր 4 րոպէով, իսկ այժմ 12 րոպէով:

Մայրաքաղաքներին ուսու լրագիրները հաղորդում են որ այս տարի գրեթէ ամբողջ Ռուսաստանում ցորենի հունձը անաջող է:

Ռուս լրագիրներին հաղորդում են ներքին Ռուսաստանի շատ քաղաքներից և գիւղերից անդադար պատահող աւերիչ հրդեհների մասին:

ԱՆԱԼՔԱՎԱԳՐԻՆ մեզ գրում են հետեւալով: «Հաշտարար միջնորդի կարգադրութեամբ օրերումս հեռացվում է իր պաշտօնից Բարաթէթ գիւղի ամուսնուհի, իսկ գաւառապետի կարգադրութեամբ տանուտէրը նորից հրաւիրվում է իր

պաշտօնին և ստանում է գաւառապետի ձեռքից իր պաշտօնական շղթան: Այս պատճառով երկու կողմերի, հաշտարար միջնորդի և գաւառապետի մէջ ծագել է մի նշանաւոր հակառակութիւն, որը վճռելու մասին յայտնված է բարձր իշխանութեանը:

ԲԱՌՈՒՄԻՅ յուլիսի 23-ից մեզ գրում են: «Այստեղ օղը վերին աստիճանի խեղդող դարձաւ: Երեկ կէսօրին թէօմիւրի ջերմաչափը ստուերի մէջ մինչև 32 աստիճան բարձրացաւ: Բայց բարեբաղդաբար ամեն տարի ամառ ժամանակ սովորական եղած ջերմ և այլ հիւանդութիւններ տակաւին չերեցտոն այս տարի, բացի սաստիկ թա՛նջից, որ շատ տարածված է այժմ Բաթումի մէջ: Վերջին ժամանակներ մեր կողմերում ոչինչ չէ լըսվում գոլութիւնների կամ մարդասպանութիւնների մասին:

Մենք լուռ ենք որ բոլոր հայաբնակ քաղաքներինց Եւրասիական կողմից, ամենինց քիչ համակրութիւն ցոյց տուեց դէպի թիֆլիսում կայանալի Ուսուցչական ժողովը: Այդ մեղշատ է զարմացնում, որովհետեւ վերջին ժամանակները Երևան սկսեց շատ ան համակրութեամբ վերաբերվել դէպի աղգային առաջադիմութեան ամեն երևոյթները: Երևան ասելով մենք չենք խօսում այդ քաղաքի ուսնալ, ինտելիգենցիա անուանված դասակարգի, կամ օտարացած և դէպի աղգութիւնը անտարբեր բնութագրաւ մասին, այլ Երևանի միջին դասակարգի թաւր, չափավորված երկտասարդութեան մասին:

ԲԱԳՈՒՄԻՅ մեզ գրում են: «Բագրի Մարգարիտական ընկերութեան խորհրդի անդամները իրանց նիստերի ամբողջ ժամանակ հայերէն մի խօսք չեն արտասանում և միշտ օտար լեզուով են խօսում: Պատճառն այն է որ անդամներինց մի երկուսը հայերէն չը գիտեն և մնացածներն չը կողորու համար, իրանք էլ հայերէն չեն խօսում: Խորհրդի անդամների մէջ կան այնպիսիներ, որոնք ոչ թէ միայն իրանց մայրենի լեզու չը գիտեն, բայց և ամենամեծ ատելութեամբ են վերաբերվում դէպի հայերէնը:

ԲԱԳՈՒՄԻՅ մեզ գրում են և հետեւալով: «Հաստատ աղբիւրներից իմացանք որ Մարգարիտական ընկերութեան խորհուրդը իր մի անդամի առաջարկով լուծում, վճռել է ոչնչացնել իր իշխանութեան տակ գտնված ուսումնարանի մէջ հայերէն լեզուի դաստաւութիւնը: Մի և նոյն ժամանակ խորհուրդը վճռել է իր ծխական դպրոցը բնական ուսումնարանի պատրաստական դպրոց դարձնել, որպէս զի այդ դպրոցից դուրս եկողը կարողանայ մտնել բնական դպրոցի առաջին դաստաւունը: Ահա, վերջապէս, Բագրի Մարգարիտական ընկերութիւնը իմացաւ թէ ինչ նպատակի ծառայեցին իր ուսումնարանը:

ԻԳԳԻՐԻՅ մեզ գրում են: «Իգրիւր մի փոքրիկ տեղ է, սակայն այստեղ ստացվում են քսանից ակելի պարբերական այլ և այլ հրատարակութիւններ: Բայց որովհետեւ այդ լրագրերի և ամսագրերի մեծ մասը մի քանի ծառայողների սեփականութիւն է կազմում, այդ պատճառով ժողովրդի զրազէտ մասը և փոքր ծառայողների դասակարգը այդ պարբերական հրատարակութիւններից չէ կարող օգտվել: Եթէ տեղիս երեսասարկները վարձէին մի սենեակ, որի վարձը, կարծում ենք, ամսական 3 րոպէուց ակելի հաղել թէ կը լինէ և տեղափոխելն այնտեղ ուսումնարանի փակված գրադարանի դրբերը, մի և նոյն ժամանակ խնդրէին պատուելի ծառայողներին ուղարկել իրանց լրագիրներն ու ամսագիրները, ի հարկէ կարգաւոց յետոյ, այն ժամանակ հասարակութեան իւրաքանչիւր անդամը միջոց կունենար պարագել ընթերցանութեամբ, վճարելով ընթերցարանի մուտքի համար 5 կօպէկ, կամ զրանից էլ պակաս: Այդպիսով կը գոյանար մի գումար որով կարելի կը լինէր ծածկել ընթերցարանի բոլոր ծախսերը: Յոյս ունենք որ յարգելի ծառայողները չեն զրանայ իրանց աշակցութիւնը այդ տեսակ օգտակար ծինարկութեամբ:

Վրաց «Գրեթա» լրագիրը հաղորդում է որ Փօն-Իրտէլի գործի առիթով դատաւարութեանից մին Ախալքաէ, մնաւ բանտի մէջ: Մահկան պատժին միւս երկու դատաւարութեանները, ինչ

պէս հաղորդում է «Тифл. Объявл.» լրագիրը, յուլիսի 28 կախվեցան Մետէի բերդի պարիսպներում, պրօկուրօրի, պօլիցէյմէյստերի, քաղաքային բժշկի և վիաների (պօնիատոյ) ներկայութեամբ:

ԱՐՏԱԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

Անգլիական «Times» լրագիրը հաստատեց այն ենթադրութիւնը, որ անգլիական կառավարութիւնը լինդոնի թիւրքիսթի միջամտութիւնը եզրկտական գործերին միայն այն պայմանով, որ թիւրքաց արշաւող զօրքերը բաւականանան «օգնական» զօրքաւորի համետ դերով և որ նրանք ենթարկվեն անգլիական զինուոր հրամանատարին, գրում է «Голосъ»: Հիմնվելով այն կասկածանքի վրա, որ թիւրքաց զօրքերը եզրկտոսի մէջ հեշտութեամբ կարող են միանալ Արաբի-փաշայի զօրքերի հետ, Լոնդօնի լրագիրը ուղղակի յայտնում է, որ Անգլիան թոյլ կը տայ թիւրքաց փոքրթիւն զօրքաւորի եզրկտոս ուղարկելը և այն էլ այն պայմանով, որ այդ զօրքերը ենթարկված լինեն անգլիական զինեւալների հրամանատարութեանը:

Կրանք պէտք է լինեն այն իրական պայմանները, որոնք, ինչպէս երևում է Կաղստօնի յայտնութեանից պարլամենտի մէջ, առաջարկված են Բ. Կրանը և որոնց թիւրքաց կառավարութիւնը դեռ չէ պատասխանել: Այսուհետեւ անկարելի է կասկածել, որ Անգլիան ոչ թէ միայն յետ չի կանչել իր զօրքերին եզրկտոսից, ինչպէս ցանկանում է սուլթանը, այլ և թոյլ չի տայ թիւրքերին, որ նրանք բազմաթիւ և ինքնուրոյնաբար գործող զօրքեր ուղարկեն եզրկտոս: Անգլիական արշաւող զօրքերի առաջին բատալիօնը արդէն ուղևորվել է Ալեքսանդրիա: Յուլիսի 20-ին ճանապարհ ընկաւ շոտլանդական զվարիկայի առաջին բատալիօնը, որի հետ ուղևորվեցին արշաւող զօրքերի զինուոր շտաբը և Վիկտորիա թագուհու երրորդ որդին, Կօնստանթն դուքսը: Անգլիացիների հաստատ վճիռը եռանդով շարունակել սկսած գործը ամենեւին չը փոխվեցաւ, չը նայելով Ֆրանսիական միւնիստրական դժուարութիւններին, որոնց պատճառով յայտնի չէ, թէ Ֆրանսիան այսուհետեւ ինչպիսի ուղղութիւն կը տայ իր եզրկտական քաղաքականութեանը: Եթէ անգլիական կառավարութիւնը եզրկտոսի մէջ դաշնակիցներ և օգնողներ ամենեւին չի ունենայ, նա միայնակ կը գործի, գիտենալով, որ իր առանձին արշաւանքի հետեւեցները լիութեամբ կը վարձատրեն նրա դոհերը թէ դրամով և թէ մարդիկներով:

Այդպիսով անհրաժեշտ է դառնում մաքստում Անգլիայի և թիւրքիայի մէջ եզրկտական հարցի հողի վրա: Կրա առաջը կարող են առնել միայն թիւրքաց կառավարութեան գործած զիջումները, որոնք չափազանց վերաւորեցուցիչ կը լինեն սուլթանի ինքնասիրութեան համար: Երկուսից ակել կարող է լինել, կամ թիւրքիան բոլորովին կը հրաժարվի եզրկտական գործերին միջամտեցը, կամ նա Անգլիայի կամ հակառակ զօրքեր կուղարկի եզրկտոս և հետեւապէս թշնամական զիջը կը բռնէ անգլիական կառավարութեան դէմ:

Աշխարհի վրա ամեն բան պատահում է: Բ. Կուռը, որ 1877 թուականին անհրաժեշտ դարձրեց պատերազմը Ռուսաստանի հետ, կարող է 1882 թուականին կուռ հրաւիրել և Անգլիային: Բայց վերջին ենթադրութիւնը շատ քիչ հաւանական է: Աւելի շուտ կարող է պատահել, որ Բ.

Կուռը այնպիսի զիջումներ կանի, որոնք թոյլ կը տան Անգլիային գործել եզրկտոսի մէջ իր ցանկութեան համեմատ և գործունենալ միայն Արաբի-փաշայի հետ: Վերջին դէպքում անգամ անգլիացիները պէտք է յաղթեն բաւական մեծ դժուարութիւններ, որովհետեւ Արաբի-փաշա ամեն բան անում է մահմետականների ֆանատիկութիւնը զրգուելու համար: Եւ այդ նպատակով իր զինին զրեց մարգարէի կանաչ չալման, որի կրելու համար դա ոչինչ իրաւունք չունի: Անգլիական արշաւող զօրքերը գործ կունենան թէպէտ վատ կազմակերպված, բայց բազմաթիւ թշնամու հետ, որին յաղթելու համար բաւական ժամանակ կը հարկաւորվի: Այդպիսով Եւրոպայի առաջ խաւար անյայտութիւն է տիրում եզրկտական հարցի մասին: Կարելի է հաւատարկ լինել, որ զիպլօմատական շատ փորձեր կանվելն ինքզիպտական անցքերի վրա ներգործելու համար: Կեռ յայտնի չէ, թէ այդ փորձերն ժամանակ ինչպիսի դեր կը խաղայ արեւելեան հարցով հետաքրքրված եւրօպական իւրաքանչիւր պետութիւնը:

ՖՐԱՆՍԻԱ

Ֆրանսիայի մէջ սկսած միւնիստրական դժուարութիւնները, ինչպէս երևում է, շուտ չեն վերջանայ, գրում է «Голосъ» յուլիսի 20-ից: Հանրապետութեան նախագահը դեռ ևս չէ դիմել քաղաքական գործիչներին ոչ մէկին, որ կարողանար փոխարինել Ֆրէյսիէին: Ժիւլ-Գրեվիի համար հեշտ չի լինի միւնիստրութիւն կազմել, ի նկատի ունենալով այն հանգամանքները, որոնք Ֆրէյսիէի անկման պատճառ դարձան: Շատ քիչ ցանկացողներ կը լինեն կառավարել երկիրը այժմեան պատգամաւորների ժողովի օգնութեամբ, իսկ արձակման միւնիստրութեան կազմը Ֆրանսիական ժողովրդի այժմեան ներկայացուցիչներից ազատվելու և նոր ընտրութիւնների նշանակելու նպատակով շատ դժուար գործ է, որովհետեւ առաջինը յայտնի չէ, արդեօք սենատը թոյլ կը տայ արձակել պատգամաւորների ժողովը և երկրորդ պատգամաւորների ժողովի արձակելը այն ժամանակ, երբ եզրկտական հարցը այդպիսի սուր բնասորութիւն է ստացել, կը նշանակի յանձն առնել ահագին պատառնանատուութիւն որ կարող է վախեցնել ժամանակակից Ֆրանսիայի ամենաեռանդոտ քաղաքական գործիչներին, բացի Գամբետայից, որին Գրեվի կը դիմէ ամենադժուար դէպքում:

Ֆրանսիական միւնիստրական դժուարութիւնների միջազգային հետեւեցները արդէն երևան եկան: Ֆրանսիական նաւերին պատուելած է դադարեցնել երթևեկութիւնը Սուէզի ջրանցքի վրա և Ֆրանսիական նաւատորմի հրամանատարին խիստ հրահանգ է առած կատարել չեզոքութիւն պահպանել, եթէ նոր անցքեր պատահեն: Մինչև չորոշվի Ֆրանսիական նոր միւնիստրութիւնը իր եզրկտական քաղաքականութեամբ, Ֆրանսիան չեզոքութեամբ կը վերաբերվի բոլոր անցքերին և նրա ժամանակաւոր չեզոքութիւնը անմիջական ազդեցութիւն կունենայ այդ անցքերի վրա:

Մինչդեռ գործերը եզրկտոսի մէջ հետզհետէ վատ ընթացք են ստանում, Բ. Կուռը այլ ևս չէ ծածկում, որ նա համաձայնեց միջամտել եզրկտական գործերին, որպէս զի առիթ ունենայ պահանջել անգլիական զօրքերի հեռացնելը Ալեքսանդրիայից: Այդ մտքով կազմված է թիւրքաց հաւատարմատարների յայտադրը

Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час., Лор.-Мелик. ул., д. каз.